Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր № ՏԷ-Ա

Էլեկտրական էներգիայի առուվաճառքի

ք. Իջևան

«----------» -ն (այսուհետ՝ «Արտադրող»)՝ ի դեմս տնօրեն ----------ի, որը գործում է Արտադրողի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «ՏԱՎՈՒՇԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Գնորդ»)՝ ի դեմս տնօրեն Ն. Ղալթախչյանի, ով գործում է Գնորդի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն առուվաճառքի պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրի համաձայն՝ Արտադրողը վաճառում, իսկ Գնորդը Պայմանագրով սահմանված կարգով գնում է Արտադրողի կողմից արտադրված էլեկտրական էներգիան (այսուհետ՝ «Էլեկտրական էներգիա») ամբողջ քանակով:

2. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳԸ

2.1. Վաճառքին ուղղված գործողությունները (այդ թվում նաև, ՇԿԾ-ի միջոցով առևտրի իրակա-նացումը, վաճառքի ենթակա էներգիայի քանակի որոշումը և այլն) իրականացվում են ՀՀ օրենսդրությամբ, Կանոններով, Պայմանագրով և նորմատիվ իրավական ակտերով սահ-մանված կարգով:

2.2. Կողմերը պարտավորվում են մինչ պայմանագրի ուժի մեջ մտնելը ապահովել էլեկտրական էներգիայի վաճառքի համար անհրաժեշտ նախապատրաստական բոլոր գործողությունների կատարումը, այդ թվում՝ ՇԿԾ-ին մասնակցելու նպատակով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 518-Ն որոշմամբ սահմանված ձևով Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասին պայմանագրին միանալու ակցեպտ:

2.3. Արտադրողը ՇԿԾ-ում գրանցման պահից պարտավոր է այդ մասին տեղեկացնել Գնորդին:

2.4. Արտադրողը պարտավոր է Պայմանագրի գործողության ընթացքում արտադրված էլեկտրական էներգիան ամբողջությամբ վաճառել Գնորդին:

3. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրեն-քով, Կանոններով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

3.2. Արտադրողն իրավունք ունի՝

3.2.1. Գնորդից պահանջել ապահովել վերջինիս՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը,

3.2.2. Պահանջել Գնորդից վճարել վաճառված էլեկտրական էներգիայի դիմաց՝ Պայմանագրով սահմանված կարգով:

3.3. Արտադրողն պարտավոր է՝

3.3.1. Կատարել և ապահովել բոլոր անհրաժեշտ գործողությունների կատարումը՝ ուղղված ՇԿԾ-ում Գնորդին էլեկտրական էներգիա վաճառելուն:

3.4. Գնորդն իրավունք ունի՝

3.4.1. Պահանջել Վաճառողից՝ կատարելու սույն պայմանագրով սահմանված այլ պարտականությունները:

3.5. Գնորդը պարտավոր է՝

3.5.1. Վճարել առաքված էլեկտրական էներգիայի համար՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում:

3.5.2. Իրականացնել սույն պայմանագրով սահմանված այլ պարտականություններ:

4. ՍԱԿԱԳԻՆԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ

4.1. Առաքված էլեկտրաէներգիայի հաշվառումը կատարվում է Արտադրողի համար ՇԿԾ-ում ամրագրված առևտրային (վերահսկիչ) Հաշվառքի սարքերից ստացված տվյալների հիման վրա:

4.2. Արտադրողի կողմից վաճառված էլեկտրական էներգիայի գնման սակագինը կազմում է ——— ՀՀ դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ (այսուհետ՝ «Սակագին»):

4.3. Սակագինը գործում է անփոփոխ մինչև 2027 թվականի փետրվարի 1-ը:

4.4. Կողմերը կարող են բանակցել 2027 թվականի փետրվարի 1-ից հետո գործող սակագնի վերանայման ուղղությամբ:

4.5. Սակագինը գործում է անփոփոխ մինչև 2027 թվականի փետրվարի 1-ը: Կողմերը կարող են բանակցել 2027 թվականի փետրվարի 1-ից հետո գործող գնի վերանայման ուղղությամբ: Գնորդն իրավունք ունի մինչև 2027թ.-ի հունվարի 25-ը (ներառյալ) Արտադրողին՝ սույն Պայմանագրով նախատեսված ծանուցումների ուղարկման որևէ եղանակով ներկայացնել Արտադրողին էլեկտրաէներգիայի ձեռքբերման նոր Սակագինը, որն ուժի մեջ է մտնելու 01/02/2027թ.-ից: Սակագնի փոփոխմանն անհամաձայնության դեպքում Արտադրողն իրավունք ունի լուծել Պայմանագիրը 01/02/2027թ.-ից: Մինչև 2027թ.-ի հունվարի 30-ը Արտադրողի կողմից Գնորդին նոր Սակագնի վերաբերյալ որևէ առարկություն չներկայացնելու դեպքում Սակագնի փոփոխությունը համարվում է ընդունված և համաձայնեցված՝ առանց որևէ լրացուցիչ փաստաթղթի (այդ թվում՝ լրացուցիչ համաձայնագրի) ստորագրման: Եթե մինչև 2027թ. հունվարի 25-ը Գնորդը Գնի փոփոխման վերաբերյալ ծանուցում չի ուղարկում, ապա 2027 թվականի փետրվարի 1-ից շարունակում է գործել տվյալ պահի գործող Սակագինը:

4.6. Պայմանագրի 4-րդ բաժնով սահմանված՝ Սակագնի վերանայման կարգավորումները նույնությամբ գործում են հաջորդ տարիների համար:

4.7. Թեկուզ և Կողմերը ընդունում են, որ Սակագնի վերանայումները Պայմանագրում սահմանված դեպքերում իրականացվում են ինքնստինքյան, այնուամենայնիվ հաստատում են, որ Սակագնի յուրաքանչյուր փոփոխության դեպքում նոր սակագինը պետք է ամրագրվի Պայմանագրում:

4.8. Գնորդին առաքված էլեկտրական էներգիայի դիմաց վճարման ենթակա գումարը (այսուհետ՝ Վճարվող գումար) Գնորդի կողմից յուրաքանչյուր ամիս Արտադրողին է վճարվում՝ Փոխանցման ակտը ստորագրելուց և Արտադրողի կողմից հարկային հաշիվը դուրս գրելուց հետո հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա ամսի 25-ը, իսկ երբ

վճարման օրվա վերջնաժամկետը հանդիսանում է ոչ աշխատանքային օր, վճարումը ենթակա է կատարման դրան հաջորդող աշխատանքային օրը:

4.9. Վճարման կատարման օր է համարվում Գնորդի հաշվարկային հաշվից դրամական միջոցների ելքագրման օրը:

5. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Արտադրողի կողմից Գնորդին Արտադրանքի փոխանցումն հավաստվում է Կողմերի ներկայացուցիչների կողմից փոխանցման ակտ (Պայմանագրի շարադրանքում՝ Փոխանցման ակտ) կազմելու և ստորագրելու միջոցով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրից բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենդրությամբ, Կանոններով, Պայմանագրով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

6.2. Վճարումների ժամկետները խախտելու դեպքում՝ ուշացված յուրաքանչյուր օրվա համար Արտադրողն իրավունք ունի Գնորդին ներկայացնել պահանջ վճարել տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0.01 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի չափը: Եթե Գնորդի կողմից վճարման կետանցը գերազանցում է մեկամսյա ժամկետը, ապա Արտադրողին իրավունք է վերապահվում միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Գնորդին:

6.3. Արտադրողը կրում է պատասխանատվություն հետևյալ դեպքերում՝

6.3.1. Արտադրողը Գնորդին չի ծանուցել պլանային անջատման ժամանակացույցի փոփոխության կամ նախատեսվող պլանային անջատումը չիրականացնելու վերաբերյալ՝ ծանուցման համար սահմանված ժամկետներում:

6.3.2. Եթե Արտադրողը էլեկտրական էներգիան սպառել բնականոն կարիքներից տարբերվող այլ նպատակների համար կամ վաճառել է արտադրված էլեկտրական էներգիան այլ անձի,

6.3.3. Եթե նախքան Պայմանագրի լուծումը Արտադրողը հրաժարվում է էլեկտրական էներգիան վաճառել Գնորդին:

6.4. Պայմանագրի 6.3. կետով պատասխանատվություն սահմանող դեպքերում Արտադրողը պարտավոր է Գնորդին վճարել տուգանք հետևյալ չափով՝

6.4.1. Եթե խախտման արդյունքում Արտադրողը վաճառում է Գնորդին ավելի պակաս քանակով էլեկտրական էներգիա, քան կվաճառեր Պայմանագրի 6.3 կետով նախատեսվող դեպքերը չկատարելու դեպքում, ապա տուգանքի չափը հավասար է՝ չվաճառված քանակը բազմապատկած տվյալ պահին գործող՝ հաշվեկշռման ծառայություն մատուցող կայանի առավելագույն սակագնի և պայմանագրի Սակագնի տարբերության թվին (առանց՝ ԱԱՀ), սակայն ոչ ավել, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում Արտադրողի կողմից առաքված էլեկտրական Էներգիայի դիմաց վճարված գումարի չափը:

6.5. Արտադրողի կողմից Գնորդին վաճառված էլեկտրական էներգիայի արդյունքում առաջացած անհաշվեկշռությունների (ավել կամ պակաս վաճառված էլեկտրական էներգիա քանակի) հաշվարկը և դրա իրականացման կարգը սահմանվում է Կանոններով:

7. ՖՈՐՍ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

7.1. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝

7.1.1. չի գտնվում Կողմի վերահսկողության ներքո.

7.1.2. Կողմը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.

7.1.3. Տեղեկացրել է մյուս Կողմին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 օրվա ընթացքում:

7.2. Սույն պայմանագրի իմաստով, մասնավորապես, ֆորս մաժոր են՝

7.2.1. բնական և տեխնածին աղետները, համաճարակները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), ատոմային, քիմիական կամ կենսաբանական աղտոտում, գործադուլները, հասարակական անկարգությունները.

7.2.2. ապստամբությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ներխուժումներ, զինված հակամարտություններ, արտաքին թշնամու գործողություններ կամ շրջափակում, որոնցից յուրաքանչյուրը տեղի է ունենում Հայաստանի տարածքում, կամ ներգրավում է այն, ինչը գոյություն չի ունեցել կամ չէր կարող ողջամտորեն կանխատեսվել սույն պայմանագրի ստորագրման ժամանակ.

7.2.3. պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունը այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, երկարաձգվել պայմանագրային պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ Կողմը գործել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Պայմանագիրը ստորագրվում է պայմանագրի առաջին էջում նշված ամսաթվին, սակայն ուժի մեջ է մտնում Գնորդի ՀՊԿԽ-ում ՀՊԿՄ կարգավիճակով ներառվելու պահից և գործում է անժամկետ:

8.2. Պայմանագիրը կարող է Կողմերից յուրաքանչյուրի կողմից վաղաժամկետ լուծվել, նախապես՝ 6 (վեց) ամիս առաջ, այդ մասին ծանուցելով մյուս կողմին, բացառությամբ Պայմանագրի 4.5 կետով նախատեսված Գնորդի կողմից միակողմանի լուծման դեպքի:

8.3. Պայմանագրի միակողմանի լուծում, բացառությամբ սույն պայմանագրով սահմանված դեպքերի, չի թույլատրվում:

8.4. Պայմանագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխություններ կարող են կատարվել գրավոր կարգով:

9. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

9.1. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Տեղեկությունների փոխանակումն ու փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հանձնվել են առձեռն՝ ստացականով, կամ ուղարկվել են Կողմերի սույն Պայմանագրի 12-րդ բաժնում նշված (կամ որոնք Կողմերը Պայմանագրի կնքումից հետո կտրամադրեն միմյանց) էլեկտրոնային փոստի հասցեներով:

9.2. Գնորդի կողմից Պայմանագրի 9.1 կետում նշված որևէ եղանակով ուղարկված ծանուցումները, այդ թվում որոնք ներառում են Պայմանագրի էական պայմանների (այդ թվում նաև՝ Սակագնի փոփոխության վերաբերյալ) փոփոխություն, համարվում են ընդունված և համաձայնեցված Արտադրողի կողմից՝ ծանուցման մեջ նշված կամ Պայմանագրով սահմանված ժամկետում, եթե այդպիսին առկա է:

9.3. Նշված ծանուցումների մեջ նշված փոփոխություններին չհամաձայվելու դեպքում Արտադրողն իրավունք ունի 10-օրյա ժամկետում (եթե այլ ժամկետ սահմանված չէ Պայմանագրով կամ ծանուցման մեջ) Գնորդին տեղեկացնել այդ մասին՝ ուղարկելով վերջինիս Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցում:

9.4. Պայմանագրի հիման վրա ծագող հարաբերությունների շուրջ էլեկտրոնային փոստի հասցեների միջոցով փոխանակված ողջ հաղորդակցությունը (նամակագրությունը) վեճերի առաջացման դեպքում Կողմերի կողմից ճանաչվում է որպես պատշաճ ապացույց:

9.5. Կողմերը պարտավոր են Պայմանագրում նշված ծանուցման վավերապայմանների փոփոխության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել միմյանց այդպիսի փոփոխության պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր հասցեի փոփոխության մասին, ապա Պայմանագրում նշված հասցեով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

9.6. Կողմերը սույնով համաձայնվում են, որ սույն Պայմանագրի բոլոր պայմանների փոփոխությունները Գնորդի կողմից միակողմանի կարող են կատարվել Պայմանագրով սահմանված ծանուցումներ կատարելու միջոցով (նշված փոփոխությունները կատարվում են «անակցեպտ» կարգով, այսինքն՝ դրանց մասով չի պահանջվում Արտադրողի առանձին համաձայնությունը), որոնց անհամաձայնության դեպքում Արտադրողն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ (եթե այլ ժամկետ սահմանված չէ Պայմանագրով կամ ծանուցմամբ) ծանուցելով Գնորդին:

9.7. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման վավերապայմանների փոփոխության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել միմյանց այդպիսի փոփոխության պահից անմիջապես հետո: Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի փոփոխության մասին, ապա ծանուցումը համարվում է պատշաճ կատարված՝ անկախ փաստացի ստացման հանգամանքից:

10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

10.1. Պայմանագրի հետ կապված Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

10.2. Բանակցությունների միջոցով վեճերի չլուծվելու դեպքում վեճը ենթակա է լուծման դատական կարգով՝ Գնորդի գտնվելու վայրի դատարանի կողմից:

11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Սույն պայմանագիրը գործում է մինչև կողմերի պարտավորությունների ամբողջական կատարումը:

11.2. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից կամ դրա խախտման համար պատասխանատվությունից:

11.3. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Կանոնները, Հայաստանի Հանրապետության այլ օրենքները և այլ իրավական ակտերը:

11.4. Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

12. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Արտադրող	**Գնորդ**
----------	«ՏԱՎՈՒՇԷՆԵՐԳՈ» ՍՊԸ
----------	ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան,
----------	Աղայան 4, 4001
ՀՎՀՀ ----------	ՀՎՀՀ 07616216
Բանկ՝ «----------»	Բանկ՝ «ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ, «Իջևան» մ/ճ
ՀՀ ----------	ՀՀ 2622372942241001
Էլ. փոստի հասցե՝	Էլ. փոստի հասցե՝
----------	tavush.energo@mail.ru
Տնօրեն՝ ----------	Տնօրեն՝ Ն. Ղալթախչյան

_____ _____